

ԱԿՆԱՐԿՆԵՐ ԵՐՈՒԱՆԴԱՇԱՏԻ ՅՈՒՇԱՐՁԱՆԱՀԱՄԱԼԻՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԵԱՆ, ՏԵՂԱԳՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՊԱՏԿԵՐԻ ՄԱՍԻՆ

ՍՈՒՍԱՆՆԱ ՄՈՒՐԱԴԵԱՆ
syuzmuradyan@gmail.com

Ուրարտական եւ հայկական մշակոյթների փոխկապակցութեան հիմնախնդիրը, նրա տարաբնոյթ դրսեւորումները՝ վաղուց գտնւում են արեւելագիտական, հայագիտական հետազօտութիւնների կիզակէտում: Այս հարցերի լուսաբանմանն առաւել հանգամանալից անդրադարձել է Գէորգ Տիրացեանը: Գիտնականը ուսումնասիրելով ուրարտական եւ նրան յաջորդող մշակոյթին բնորոշ մի շարք համեմատելի սկզբունքներ (բնակավայրերի ու քաղաքների տեղանքի ընտրութիւն, ամրաշինութիւն, ճարտարապետական ձեւեր, շինարուեստ եւն.) այն կարծիքն է յայտնել, որ վերոյիշեալ ոլորտներում ակնյայտ են աւանդոյթների շարունակականութիւնը, ժառանգականութիւնը[1]: Մասնաւորապէս, ուշադրութիւն է դարձուել պալատական շինութիւններում եւ կրօնական կառոյցներում տեսանելի զուգահեռականութեանը, ինչը, հեղինակի համոզմամբ՝ պէտք է դրսեւորուէր յատկապէս անտիկ Հայաստանի որոշ պաշտամունքային յուշարձաններում:

Այս տեսակէտի արդարացիութիւնը դրսեւորուեց Երուանդաշատի հնագիտական համալիրի[2] պեղումների ընթացքում, որտեղ ուրարտական մշակոյթի առկայութիւնն այսօր արդէն կարող է գնահատուել որպէս փաստ: Երուանդաշատի «Որսորդական Պալատ»ի տարածքում տարուած հնագիտական պեղումների շնորհիւ վերհանուեցին մի շարք արժէքաւոր տուեալներ, այդ թւում՝ Անտիկ Հայաստանի վաղագոյն՝ Երուանդունեաց հարստութեան վերջին արքայի՝ Երուանդ Վերջինի (Ք.ա. 222-201) յայտնի շինարարական գործունէութեան վերաբերեալ[3]: Համալիրի պեղուող հատուածը գտնւում է Արարատեան դաշտավայրի արեւմտեան





հատուածում, Արաքս եւ Ախուրեան գետերի խառնարանից քիչ հարաւարեւելք, Արաքսի ձախ ափին գտնուող դարաւանդի վրայ (ՀՀ Արմաւիրի մարզ, գ. Երուանդաշատ)[4]:

2005-14՝ ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ Ազգագրութեան Ինստիտուտի Երուանդաշատի հնագիտական արշաւախումբը (ղեկավար՝ պ.գ.թ. Ֆելիքս Տէր-Մարտիրոսով) սիստեմատիկ պեղումներ նախաձեռնեց համալիրի այսպէս կոչուած «Որսորդական Պալատ»ում: Այս մեծածաւալ, բազմատարր կառոյցի վաղագոյն՝ կենտրոնական մասը յատակագծում քառակուսի է (24,40x24,80մ), շարուած կիսամշակ խոշոր գետաքարերից եւ արտաքուստ օժտուած է կանոնաւոր գծային եւ անկիւնային որմնահեցերով: Պալատի կենտրոնական սրահում ի յայտ եկան երեք բազալտէ խարիսխներ, որոնք բացարձակապէս in situ չլինելով հանդերձ, լուսաբանում են կառոյցի ծածկի հետ կապուած խնդիրները:

Պալատին կցուած են տարաբնոյթ ճարտարապետական յաւելումներ, որոնց մի մասի պատերը եւս ամրացուած են նման ելուստներով:

Համալիրի արեւելեան թեւում բացայայտուեց 19x8մ չափսի մի այլ սրահ, որի կաւածեփ յատակի մէջ տեղակայուած էին շուրջ 36 կարաս[5]: Ինչպէս կենտրոնական համալիրին կից կառոյցներում, այնպէս էլ կարասների թւում նկատելի են ժամանակագրական որոշակի տարբերութիւններ, որոնք վկայում են ողջ պեղուած համալիրի երկարատեւ գործարկման մասին:

Դատելով յայտնաբերուած հնագիտական գտածոների (ճարտարապետական մանրամասներ, խեցեղէն եւն.) բնոյթից, ինչպէս նաեւ առկայ գրաւոր աղբիւրների տուեալներից[6], այդ գործարկման լայնոյթն ընդգրկել է Վանի Թագաւորութեան ժամանակաշրջանից՝ առնուազն մինչեւ Ք.ե. Դ. դարը[7]:

Պեղուող տարածքը վերջին տարիների ուսումնասիրութիւններում (Տէր-Մարտիրոսով) ներկայացուած է որպէս *պալատական համալիր, կառուցուած Անտառ Ծննդոց արքայական արգելոցում*: Հենց այս պալատի հետազօտութեան որոշ արդիւնքներն ու Երուանդաշատի հնագիտական համալիրի *տարրերից* երկուսի՝ Երուանդակերտի եւ *Անտառ Ծննդոցի* թուագրութեան եւ տեղակայման խնդիրն են ընդգրկուած սոյն աշխատանքում հիմք ընդունելով պատմագիտական սկզբնաղբիւրները եւ հնագիտական հետազօտութիւնների արդիւնքները:

ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆՆ *ԱՆՏԱՌ ԾՆՆԴՈՅՈՒՄ*[8]

Երուանդաշատ հնագիտական համալիրի պալատական կառոյցի պեղումները հնարաւորութիւն ընձեռեցին բացայայտելու ուրարտա-հայկական մշակութային զուգակցման որոշակի դրսեւորումներ: Ուղղակի ուրարտական ներկայութիւնն այստեղ առկայ է որոշակի ճարտարապետական լուծումներում. մասնաւորապէս, պալատի կենտրոնական համալիրի յօրինուածքն ու շինարարական մանրամասները (յատակագիծ, գծային եւ անկիւնային որմնահեցեր, հիմնապատերի շարուածք, ճարտարապետական համամասնութիւն եւն.) ցուցադրում են դրա ակնյայտ օրինակները: Նոյն ուրարտական ծագումն ունեն պալատի կենտրոնական դահլիճի սեան երեք խարիսխները, որոնք կրկնում են Էրեբունիի եւ Արգիշ-

տիխինիլիի յայտնի ձեւերը, ինչպէս նաեւ Ալթին Թեփէի Խալդիի տաճարը երիզող սիւնախարիսները: Սեղանի խեցեղէն սպասքի ուրարտական նմուշների (Ք.ա. Է.-Զ. դդ.), տիպական բրոնզէ ճարմանդի առկայութիւնն այստեղ նոյնպէս խօսում է նման թուագրութեան արդարացիութեան մասին: Բացի այդ, նոյնպիսի ուղղակի դրսեւորումներ տեսանելի են նաեւ տնտեսական խեցեղէնում, յատկապէս՝ կարասային սրահի խոշոր գօտեզարդ կարասների մի շարք նմուշներում: Ընդ որում, այս մառանում առկայ են ոչ միայն ուրարտական, այլեւ աւելի ուշ՝ անտիկ կարասներ[9]:

Հաշուի առնելով Երուանդաշատում ուրարտական մշակութային ներկայութեան որակն ու ծաւալները, կարելի է ենթադրել որ պալատը հիմնադրուել է Վանի թագաւորութեան շրջանում: Ուրարտական բնակելի եւ ամրոցային այլ կառոյցների հետ ընդհանրութիւնից բացի, երուանդաշատեան պալատի նման ծագման մասին է վկայում նրա ուղղակի զուգահեռականութիւնը մասնաւորապէս՝ Արգիշտիխինիլիի արեւմտեան ամրոցի դահլիճի եւ այսպէս կոչուած «Կնիքակրի Տան», Օշականի ամրոցի, Բաստամի հիւսիսային շինութեան, ինչպէս նաեւ Սոլակի համաժամանակեայ բնակավայրի կենտրոնական կառոյցի ճարտարապետութեան հետ[10]:



Առկայ նիւթական տուեալները դեռեւս թոյլ չեն տալիս ճշգրտելու այս յուշարձանի ժամանակագրական բոլոր մանրամասները (կառուցման որոշակի ժամանակը, նրա «հեղինակումը» եւն.), սակայն ակներեւ է որ ուրարտական համալիրը հիմք է ծառայել յետագայի՝ Երուանդեան եւ աւելի ուշ շրջանի շինարարական գործունէութեան համար[11]:

ԵՐՈՒԱՆԴ ՎԵՐՋԻՆԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՐՕՆԱ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Ուրարտա-հայկական մշակութային աղերսները տուեալ յուշարձանում ունեցան եւս մի ուշագրաւ բացայատում. դա 2014ին, պալատի կենտրոնական համալիրի հարաւային պատին գրեթէ կից՝ ճակատային պատից 85սմ հեռաւորութեամբ տեղադրուած, 6.35x6.40մ ընդհանուր չափերով քառանկիւնի կառոյցն էր[12]: Նրա չորս անկիւններն էլ ունեն մօտ 0,5 մետրանոց ելուստներ, հարաւից՝ 0,95սմ բացուածքով դուռը տանում է դէպի միակ, 2.15x2.15մ չափերով սենեակը:

Կառոյցի շէմն ու ներքին տարածքի յատակը պատուած էին մեծ քարէ սալերով, որոնց վրայ, հիւսիսային պատին կից (մուտքից 0,85մ հեռաւորութեան վրայ)՝ պահպանուել էին նաեւ աւելի փոքր սալերից շարուած, 30սմ բարձրութեամբ քառանկիւնի մի հարթակ (զոհասեղան՞), ծածկուած կաւի եւ կրի վերադիր ծեփով:

Յատակագծային իր ողջ յօրինուածքով այս շինութիւնը ձայնակցում է ուրարտական «susi» տիպի յայտնի սրբարանների հետ (Էրեբունի, Արմաւիր, Ալթին Թեփէ, Այանիս եւն.[13]), տարբերուելով դրանցից միայն իր համեստ չափերով եւ, ինչը կարեւոր է՝ տեղադրութեան մանրամասներով, նրա արհեստականութեամբ: Այսպէս, այն կառուցուած է պալատի վաղագոյն համալիրի պատից աննշան հեռաւորութեան վրայ, փակելով նրա ճակատի գրեթէ ողջ հարաւ-արեւելեան հատուածը: Ճարտարապետական այս յաւելումը տեղադրելու նպատակով՝ փակուել է նաեւ համալիրի արեւելեան թեւը տանող դռներից մէկը: Որոշակի տարբերութիւն է նկատւում պալատի եւ կից կառոյցի շինարարական եղանակաձեւերի խնդրում եւս: Ասուածը վկայում է այն մասին որ «susi»ատիպ աշտարակը կառուցուել է պալատի տեւական շահագործման աւելի ուշ փուլում: Նման իրողութիւն բացայայտուել է նաեւ Վիրքում (Սամադլօ), որտեղ նոյնպէս Ք.ա. Ը.-Է. դարերի ամրոցում, աւելի ուշ՝ Ե.-Դ. դարերում, կառուցում է աշտարակաձեւ սրբարան[14]:



Դատելով քննուող շինութեան տարածքում յայտնաբերուած հնագիտական նիւթի, մասնաւորապէս՝ խեցեղէնի, ժամանակագրական միատարրութիւնից (Ք.ա. Բ. դարի սահմաններ), կարելի է ենթադրել, որ այն պատկանում է Երուանդ Վերջինի օրօք ուրարտական պալատում կատարուած յաւելումների թուին: Ըստ երեւոյթին, արքան պալատը վերագործարկելով, նրան է կցել իր նախորդ մայրաքաղաք-նստավայր Արմաւիրի տաճարական համալիրի կրկնօրինակ-«մանրակերտը», ապահովելով հին ու նոր նստավայրերի սրբարանների յօրինուածքային կապը[15]: Տրամաբանական է ենթադրել, որ Երուանդն այստեղ ձեռնարկած կառոյցներում օգտագործել է իր նախկին նստավայրում շարունակաբար գործարկուող (ուրարտական շրջանից՝ մինչեւ անտիկը ներառեալ) հին սրբարանի ճարտարապետական յօրինուածքը:

Ուրարտական այս աւանդոյթների փոխադրումը դաստակերտ՝ ուղղակիօրէն կապուած է «արմաւիրեան ժառանգութեան» հետ, քանի որ Վանի թագաւորութեան անկումից յետոյ Արմաւիրը, որոշ քաղաքաշինական եւ այլ վերափոխութիւններով հանդերձ, մնաց այն նշանաւոր կենտրոնը, որտեղ շարունակուեց նոր՝ Երուանդունեաց պետութեան հոգեւոր եւ վարչական կեանքի զարգացումը:

Վերադառնալով ուրարտական Երուանդաշատի խնդրին, անհրաժեշտ է նկատել որ Բիայինիլիի տիրակալների կողմից Արարատեան Դաշտավայրի քննուող հատուածի ընդգրկումը թագաւորութեան սահմաններում՝ գնահատելի է որպէս օրինաչափ: Արաքսի եւ Ախուրեանի հովիտների հաղորդակցային ներուժը, դրանից բխող ռազմական եւ տնտեսական հնարաւորութիւնները չէին կարող անտեսուել ուրարտացիների կողմից, թէ՛ Արարատեան Դաշտավայրի՝ «Ուազա երկրի», թէ՛ յետագայում Շիրակի՝ «Էրիախիի» հպատակեցման սկզբնական փուլում: Կարելի է ենթադրել, որ Երուանդաշատի շրջակայքի, Արաքս-Ախուրեան գետախառնուրդի հիրացմամբ ամփոփուել է ողջ Արարատեան Դաշտավայրում ուրարտական գերակայութեան վերջնական հաստատման գործընթացը:

ԵՐՈՒԱՆԴԱԿԵՐՏԻ ՏԵՂԱԿԱՅՄԱՆ ԵՒ ԿԱՌՈՒՑՈՒԱԾՔԻ ՇՈՒՐՋ

Այժմ՝ որոշ նկատառումներ *Անտրան Ծենդոցի* եւ Երուանդակերտի տեղակայման վերաբերեալ: Երուանդաշատի յուշարձանային համալիրի առանձին միաւորների աշխարհագրութեան շուրջ առարկայական անդրանիկ ուսումնասիրութիւնը կատարել է դեռեւս Բաբկէն Առաքելեանը: Ըստ նրա՝ Երուանդաշատ քաղաքն իր հիմնադրման սկզբնական փուլում գրաւել է ներկայիս Բագարան գիւղի մօտակայքում գտնուող բլրակը, ապա ատիճանաբար ընդարձակուել է հիւսիսային եւ հարաւային դարաւանդների, ինչպէս նաեւ Արաքս-Ախուրեան

գետախառնուրդից դէպի արեւմուտք ընկած բլրախմբի ուղղութեամբ: Իսկ Երուանդակերտը հեղինակը տեղակայում էր Ախուրեան գետի ձախ ափին՝ ներկայիս սահմանային «երկաթէ կամրջի» հարեւանութեամբ, որտեղ տարուած շրջայցերի ընթացքում՝ նա արձանագրել էր անտիկ շրջանին վերաբերող կառոյցների աւերակներ[16]:

Տէր Մարտիրոսովի կարծիքն այլ է. Երուանդաշատը նա տեղադրում է Արաքս գետի աջ ափին խոյացող ժայռին, իսկ Երուանդակերտը տեսնում է Արաքս-Ախուրեան գետախառնուրդից արեւմուտք, քաղաքի տարածքի սահմաններում, գնահատելով այն որպէս նրա թաղամասը: Ինչ վերաբերում է յուշարձանային համալիրի պեղուող տարածքին, ապա այն որակում է որպէս Երուանդ արքայի որսորդական արգելոցի՝ *Անտառ Ծննդոց*ի տարածքում կառուցուած պալատ[17]:

Այստեղ մանրամասնօրէն չանդրադառնալով Երուանդաշատ քաղաքի տեղակայման հարցին, նշենք միայն որ մենք կիսում ենք այդ հարցի՝ Տէր Մարտիրոսովի տեսակէտը, որը հիմնաւորուած է հեղինակի կողմից անցկացուած տեղազննումների արդիւնքներով, ինչպէս նաեւ լիովին համահունչ է Մովսէս Խորենացու համապատասխան հաղորդմանը[18]:

Ինչ վերաբերում է *Անտառ Ծննդոց*ին ու Երուանդակերտին, ապա վերջիններիս տեղադրութեան քննութիւնից առաջ՝ տեղին է վերյիշել դրանց շուրջ Խորենացու տեղեկութիւնները. մասնաւորապէս, *Անտառ Ծննդոց*ի մասին խօսելիս, Խորենացին նկատում է.

> Տնկում է նաեւ մեծ անտառ գետի հիւսիսային կողմում, պարիսպներով ամրացնում է եւ ներսն արգելում է արագ այծեամներ, եղնիկների եւ եղջերուների ցեղեր, ցիռեր, վարազներ, որոնք աճելով ու բազմանալով անտառը լցրին, եւ նրանցով թագաւորն ուրախանում էր որսի օրերին: Անտառը նա կոչում է Ծննդոց Անտառ[19]:

Ապա, անդրադառնում է Երուանդակերտ ձեռակերտին.

> Ինձ քաղցր է պատմել նաեւ գեղեցիկ Երուանդակերտ դաստակերտի մասին, որ նոյն Երուանդը շինեց գեղեցիկ եւ չքնաղ յօրինուածքով: Որովհետեւ մեծ հովտի միջին մասը լցնում է բնակչութեամբ եւ պայծառ շինութիւններով, ինչպէս աչքի բիբը, իսկ բնակչութեան շուրջը կազմում է ծաղկոցներ եւ բուրաստաններ, ինչպէս բիբի շուրջը աչքի միւս բոլորակը: Իսկ այգիների բազմութիւնը նմանում էր խիտ արտեւանունքի գեղեցիկ գծին, որի հիւսիսային կողմի կամարաձեւ դիրքը իսկապէս համեմատւում էր գեղեցիկ կոյսերի

յօնքերին: Իսկ հարաւային կողմից հարթ դաշտերը [յիշեցնում էին] ծնօտների գեղեցիկ ողորկութիւնը: Իսկ գետն իր երկու ափերի բարձրութիւններով պատկերացնում էր մի բերան, իր երկու շրթունքներով: Եւ այս գեղեցիկ դիրքը կարծես անթարթ հայեացքն ուղղել է թագաւորանիստ բարձրաւանդակի վրայ[20]:

Խորենացու նկարագրութեան եւ տեղագրական քննութեան տուեալների համադրութիւնը յստակեցնում է *Անպատ Ծննդոց*ի տեղակայման հարցը: Ակներեւաբար, արգելոցը գտնւում էր Արաքսի ձախ՝ հիւսիսային ափին եւ արեւելք-արեւմուտք առանցքով տարածւում երկու գետերի խառնարանից՝ մինչեւ Արաքսի մօտակայ արեւելեան գետակապը («Շախվառուտի հանդերի» սահմանը): Հիւսիսից՝ այն պէտք է սահմանափակուէր ներկայիս Բագարան եւ Երուանդաշատ գիւղերի տարածքները շրջապատող ժայռոտ բարձուքներով: Եւ գրաւոր ու տեղագրական տեղեկատուութեան լոյսի ներքոյ՝ միանգամայն արդարացի է դառնում Տէր Մարտիրոսսոուի կարծիքն անտառի տեղակայման վերաբերեալ: Միաժամանակ, սակայն, որոշակի տարակուսանք է առաջացնում անտիկ Երուանդաշատի պեղուող հատուածի՝ լոկ որպէս «որսորդական պալատի» նրա բնորոշումը:

Նախեւառաջ, Պատմահօր նկարագրութեան բերուած հատուածներից բխում է որ թէ՛ *Անպատ Ծննդոց*ը եւ թէ՛ Երուանդակերտ դաստակերտի կառուցապատուած հատուածն ընկնում են «**գետի**» (իմա՝ Արաքսի) նոյն հիւսիսային ափին: Բացի այդ, դատելով Առաքելեանի եւ նրան ուղեկցած հնագէտների շրջագայութիւնների տուեալներից, ուսումնասիրուած պալատի շրջակայքում դեռեւս 1970ականներին առկայ էին կոթողային այլ շինութիւններ, որոնց թւում՝ նաեւ մի կառոյց, որն իր չափերով եւ ճարտարապետական յօրինուածքով լիովին կրկնում էր 2005-14ին պեղուածը[21]: Վերջինս, ըստ ականատես մասնագէտների հաղորդումների՝ գտնւում էր «Որսորդական Պալատ»ից մօտ 100մ դէպի հիւսիս: Նոյն տարածքում առկայ էին նաեւ զանգուածեղ այլ շինութիւնների հետքեր, կառուցուած «պալատ»ի հետ լիովին նոյնացող շինարարական լուծումներով: Ցաւօք, այս կառոյցների ճնշող մեծամասնութիւնը աւերուել է 1980ականների վերջի հողային հարթեցումների ընթացքում: Առկայ սահմանափակ հնագիտական տեղեկատուութեամբ՝ դժուար է պեղուած «պալատ»ն ու յիշեալ աւերուած կառոյցները վստահաբար միաւորել նոյն ժամանակագրական սահմաններում[22]: Սակայն, յիշեալ հարթեցումների տարածքում գրանցուած վերգետնեայ անտիկ գտածոները թոյլ են տալիս ընդունել նման նոյնականութեան հնարաւորութիւնը:

Ասուածից ելնելով, պեղուած ընդարձակ տարածքի եւ անցեալում գրանցուած բազմաքանակ ճարտարապետական մնացորդների ընկա-

լումը մէկ «որսորդական պալատ»ի տարր՝ հազիւ թէ արդարացուած լինէր: Փորձենք հիմնաւորել մեր այս ընկալումը.

- Անկախ Երուանդի շինարարական գործունէութեան նշանակալի ծաւալներից, վերը նշուած կառոյցների զբաղեցրած ընդհանուր տարածքը զգալիօրէն գերազանցում է որսորդական պալատի համար տրամաբանօրէն ընդունելի չափերը.
- Ինչպէս ձեռակերտը, այնպէս էլ որսորդական արգելոցն, անշուշտ, դասելի են արքայապատկան հողատարածքների շարքում եւ դրանց սերտ հարեւանութիւնը միանգամայն տրամաբանական կը լինէր[23].
- Պեղուած համալիրում բացայայտուած գինու մառանի (մառանների՞) նշանակալի ծաւալներն ընկալելի են առաւելապէս այգեգործական-արտադրական գործառոյթի (ագարակ, ձեռակերտ) այլ ոչ թէ միայն սպառողական բնոյթի համալիրի (պալատ) պահանջների բաւարարման ենթահողով[24].
- Ուսումնասիրուող յուշարձանի տեղակայութիւնը իրապէս համապատասխանում է Երուանդակերտ ձեռակերտի եւ Երուանդաշատ մայրաքաղաքի աշխարհագրական յարաբերակցութեան վերաբերեալ Խորենացու ակնարկին (...«*Եւ այս գեղեցիկ դիրքը կարծես անթարթ հայեացքն ուղղել է թագաւորանիստ բարձրաւանդակի վրայ*»):
- Խորենացու հաղորդման մէջ ակնարկուող արքայական ձեռակերտի եւ *Անպատ Ծննդոց*ի հարեւանութիւնը (ԽԱ-ԽԲ) թոյլ է տալիս 2005-14ին պեղուած համալիրը եւ նրա հարեւանութեամբ նախկինում բացայայտուած կառոյցները համադրելու Երուանդակերտ ձեռակերտի բնակելի (պալատական) համալիրի հետ:

Ուշագրաւ է, որ Խորենացու նկարագրութիւնից բխում է Երուանդակերտի երկմաս կառուցուածքը՝ վերջինիս տեղակայումը գետի երկու ափերին: Կարելի է ենթադրել, որ այդ բաժանումը կատարուել է ելնելով ձեռակերտի տարրերի գործառութային առանձնայատկութիւններից: Արաքսի ձախ, հիւսիսային ափին, ընդհուպ *Անպատ Ծննդոց*ին կից, պէտք է գտնուէր արքայական նստավայրը՝ ձեռակերտի կառուցային *կորիզը* (Խորենացու յիշատակած «*աչքի բիբը*»), իսկ աջ ափին՝ վերջինիս գիւղատնտեսական-արտադրական յենքը: Երուանդաշատի յուշարձանային համալիրի տեղանքի քննութիւնը գետի հարաւային ափին ի յայտ է բերում նշանակալի մի հողատարածք, որը միանգամայն բարենպաստ պէտք է լինէր տարաբնոյթ գիւղատնտեսական գործունէութեան համար (Պատմահօր «*հարաւային կողմից հարթ դաշտերը*»):

Ամփոփելով վերը նշուածը, կարելի է եզրակացնել որ յուշարձանահամալիրի պեղուած հատուածը Երուանդակերտի պալատական համալիրն է, կառուցուած արքայական որսատեղիի՝ *Անպատ Ծննդոց*ի հարեւանու-

թեամբ[25]: Իսկ ձեռակերտի ագարակային մասը գտնուել է պալատի դիմաց, Արաքսի աջ ափին:

Երուանդ Վերջինի քաղաքաշինական գործունէութեան վերլուծութիւնից կարելի է ենթադրել, որ արքայի նախաձեռնութիւններն ունեցել են յաջորդական բնոյթ: Ելնելով ծրագրուած աշխատանքների ծաւալի եւ նրանց բարդութեան տրամաբանութիւնից, կարելի է ենթադրել որ նոր արքայանիստի՝ Երուանդաշատի հիմնադրմանը նախորդել է Երուանդակերտ դաստակետի կառուցումը երբեմնի ուրարտական պալատական համալիրի վերագործարկմամբ: Նման մեկնակէտի առկայութեան պարագայում կարելի էր վերահսկել նոր քաղաքի կառուցման աւելի տեւական գործընթացը: Սակայն, այդ կապակցութեամբ Խորենացու հաղորդումից, ասես՝ բխում է այլ յաջորդականութիւն. արքան նախ արքունի նստավայրը Արմաւիրից տեղափոխում է Երուանդաշատ, ապա տնկում *Անտառ Ծննդոց*ը եւ յետոյ միայն կառուցում Երուանդակերտ ձեռակերտը[26]: Տուեալ անհամապատասխանութիւնը գուցէ եւ բխում է այն հասկանալի հանգամանքից որ Պատմահայրը Երուանդի նախաձեռնութիւնների շարադրութիւնը ներկայացրել է ըստ վերջիններիս կարեւորութեան եւ ոչ ըստ ժամանակագրական յաջորդականութեան:

Դաստակերտի եւ մասնաւորապէս՝ արքայական հանգստավայր - *պարադիզի* ընդհանուր գաղափարը, ունենալու աքեմենեան[27] (աւելի ստոյգ՝ հինարեւելեան) ակունքներ, չպէտք է խորթ լինէր նաեւ բուն ուրարտական մշակութային դաշտին, որն, ինչպէս յայտնի է, հանդիսացել է աքեմենեան շինարարական-քաղաքաշինական աւանդոյթի ձեւաւորման հիմնատարրերից մէկը: Ինչ վերաբերում է յետուրարտական Հայաստանին, ապա, հնագիտական-ճարտարապետական տուեալների վկայութեամբ՝ նախորդող մշակոյթի ազդեցութիւնն այստեղ անմիջական բնոյթ էր կրում: Վերջինիս ուղղակի դրսեւորումները երեւան եկան նաեւ Երուանդաշատի համալիրի տուեալ միաւորի պեղումների ընթացքում:

Այսպիսով, Երուանդակերտ ձեռակերտի քննութիւնն ի յայտ է բերում նրա ուրարտական հիմքերը եւ յաւելեալ լոյս է սփռում ուրարտահայկական մշակութային ժառանգականութեան խնդիրներին: Յուշարձանի յետագայ ուսումնասիրութիւնները հնարաւորութիւն կ'ընձեռեն խորացնելու մեր գիտելիքներն ինչպէս նշուած մշակութային առնչութիւնների, այնպէս էլ Երուանդեան Հայաստանի պատմութեան եւ մշակոյթի հիմնահարցերի վերաբերեալ[28]:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

[1] Գէորգ Տիրացեան, «Ուրարտու եւ Հայաստան», *Պատմաբանասիրական Հանդէս*, 1978:1, էջ 43-60. նաեւ՝ G. Tirac'yan, "Armawir", *Revue des Études Arméniennes, T. 27*, 1998-2000, էջ 176-80:

[2] Խօսելով համալիրի մասին, մենք նկատի ունենք հայկական գրաւոր աղբիւրներում արձարձուած, հնագիտօրէն յայտնի եւ դեռեւս չուսումնասիրուած չորս յուշարձան.- բուն Երուանդաշատ քաղաքը, Բագարան տաճարական կենտրոնը, Երուանդակերտ արքայական ձեռակերտն ու «Ծննդոց Անտառ» *պարադիզ*-որսատեղին:

[3] *Հայ ժողովրդի Պատմութիւն, Հատ. 1*, Երեւան, ՍՍՀ ԳԱ Հրատ., 1971, էջ 514-16. նաեւ՝ *From Urartu to Armenia. Florilegium G. Tirats'yan, V. 3*, (ed. by R. Vardanyan), 2003, էջ 68-9: Երուանդ Վերջինի մասին ակնարկում է նաեւ Ստրաբոնը, յայտնելով, որ Երուանդը (Օրոնտէս)՝ հռչակաւոր եօթ պարսիկներից մէկի՝ Հիւդարնէսի շառաւիղը, իշխող գերդաստանի վերջին ներկայացուցիչն էր (Strabo, *Geogr.*, XI, 14, 15): Երուանդի գահընկեցութիւնից յետոյ, նրան յաջորդում է Արտաշէսը (Արտաշէս Ա, Ք.ա. 189-160), որը, դատելով վերջինիս արձանագրութիւններից՝ ծագումով նոյնպէս Երուանդունի էր:

[4] Յուշարձանի պեղումների հանգամանալից նկարագրութիւնը տե՛ս՝ Փ. Тер-Мартиросов, "Ервандашат", *Պատմաբանասիրական Հանդէս*, 2008:1, էջ 4-19. նաեւ՝ Փ. Тер-Мартиросов, "Ервандашат", *«Անտառ Ծննդոց». Յօդուածների ժողովածու*, խմբ.՝ Է. Մինասեան, Հ. Պետրոսեան, Հ. Մելքոնեան, Երեւան, «ՎԵԼԼԱՍ Պրինտ», ԵՊՀ Հրատ., 2015, էջ 33-54:

[5] Կարասային սրահի եւ կարասների մանրամասն նկարագրութիւնը տե՛ս՝ Ա. Գաբրիէլեան, «Երուանդաշատի Պալատական Համալիրի Կարասային Սրահը», *«Անտառ Ծննդոց». Յօդուածների ժողովածու*, էջ 117-31:

[6] Փ. Բուզանդ, *Պատմութիւն Հայոց*, Երեւան, Հայաստան Հրատ., 1968, էջ 219:

[7] Ֆ. Տէր Մարտիրոսովի վերոյիշեալ աշխատանքներում պեղուող յուշարձանի գործարկումն անտիկ շրջանի սահմաններում՝ հասցուում է մինչեւ Ք.յ. Ա. դարի սկիզբը: ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ Ազգագրութեան Ինստիտուտի Հին Հայաստանի հնագիտութեան բաժնի վարիչ Մ. Զարդարեանի կողմից հնագիտական նիւթի որոշ թուագրական վերանայումները տեղիք են տալիս ենթադրելու, որ ոչ միայն պեղուող համալիրի հատուածի, այլեւ Երուանդաշատ քաղաքի տուեալ տարածքի աշխուժ կենսագործունէութիւնը զգալիօրէն աւելի տեւական են եղել:

[8] Այստեղ *անտառ ծննդոցի* յիշատակումը բխում է նախորդ հրատարակութիւններում արմատաւորուած յուշարձանի ընկալման եւ տեղակայման «աւանդոյթից»: Երուանդաշատի յուշարձանահամալիրի հետազօտուած տարածքի մեր գնահատականը տե՛ս՝ ստորեւ:

[9] Կարասային սրահի եւ կարասների մանրամասները տե՛ս՝ Գաբրիէլեան:

[10] А. Мартиросян, *Аргиштихинили*, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատ., 1974, նկ. 41. նաեւ՝ Կ. Ղաֆադարեան, *Արգիշտիխինիլի Քաղաքի Ճարտարապետութիւնը*, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատ., 1984, գծ. 9, 21. նաեւ՝ С. А. Есаян, А. Калантарян, *Ошакан*, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատ., 1988, աղ. III. նաեւ՝ W. Kleiss. *Bastam I, Band IV, Ausgrabungen in den Urartäischen Anlagen 1972-*

1975, Berlin, Abb. 17, 73. նաեւ՝ Հ. Աւետիսեան, Ա. Բորոխեան, *Ուրարտուի Հնագիտութիւն*, Երեւան, 2010, գծ. 21, 24, 28. նաեւ՝ Ա. Պետրոսեան, Ռ. Դան, եւ այլոք, «Կոտայքի Հետախուզման Ծրագրի 2016 թ. Հիմնական Արդիւնքները», *Մեծամօրեան Ընթերցումներ, Գիտական Յօդուածների ժողովածու*, Երեւան, Պատմամշակութային Արգելոց-Թանգարանների եւ Պատմական Միջավայրի Պահպանութեան Ծառայութեան, ՊՈԱԿ Հրատ., 2017, նկ. 1. նաեւ՝ K. Jakubiak, "Argishti I in the Arax Valley: Consequences of the Conquest," *Polish Archaeology in the Mediterranean*, 2017:XXVI/1, էջ 578-79:

[11] Իդէպ, յետուրարտական գործարկման հետքեր առկայ են նաեւ Սոլակի յուշարձանում (Պետրոսեան եւ այլոք):

[12] Չափագրող ճարտարապետ Հ. Կիւրեղեան:

[13] I. Karapetyan, "The Susi – Temple of Argishtihinili-Armavir," *Aramazd, Armenian Journal of Near Eastern Studies*, 2010:2(V), էջ 36-40. նաեւ՝ W. Kleiss, *Zur Rekonstruktion des Urartäischen Tempels*, Istanbuler Mitteilungen, Band 39, 1989, էջ 265-68. նաեւ՝ Tugba Tanyeri-Erdemir, "The Temple and the King: Urartian Ritual Spaces and their Role in Royal Ideology," *Culture and History of the Ancient Near East, V. 26*, Leiden, 2007, T. 1, 2:

[14] F. Knauss, "Ancient Persia and the Caucasus," *Iranica Antiqua*, 2006:XLI, էջ 89, fig. 9:

[15] Արգիշտիխինիլի-Արմաւիրի «susi»ի պեղումները հաստատապէս վկայում են անտիկ շրջանում վերջինիս աշխուժ գործարկման մասին (Karapetyan): Նոյնը կարելի է պնդել նաեւ Էրեբունիի համապատասխան տաճարի մասին: Այսպիսով, Երուանդի նման նախաձեռնութիւնը չպէտք է արտասովոր ընկալուէր:

[16] Բաբկէն Առաքելեան, «Որտեղ Են Գտնուել Երուանդաշատ Եւ Երուանդակերտ Քաղաքները», *Պատմաբանասիրական Հանդէս*, 1965:3, էջ 10-12:

[17] Тер-Мартиросов, էջ 41-45:

[18] Մ. Խորենացի, *Հայոց Պատմութիւն*, Երեւան, Երեւանի Համալսարանի Հրատ., 1981, Գլուխ ԽԱ:

[19] Խորենացի, Գլուխ ԽԱ:

[20] Խորենացի, Գլուխ ԽԲ:

[21] A. Kanetsian, *Tipi di Constrazione e Materiali Edilizi. Ai Piedi dell' Ararat. Cietta' e Insediamenti nell'Armenia di eta' Classica*, Թորինo, 1998, էջ 41:

[22] Հաշուի առնելով յուշարձանի պեղուած տարածքում նշանակալի ուրարտական մշակութային ներկայութեան փաստը, միանգամայն հնարաւոր է որ վերոյիշեալ աւերուած կառոյցները եւս հիմնադրուած լինէին նախաերուանդեան շրջանում ու գործարկուէին յետագայում եւս:

[23] Այս առումով, խնդրայարոյց է Տէր Մարտիրոսովի տեսակէտը, թէ Երուանդակերտը փաստօրէն եղել է Երուանդաշատի թաղամասերից մէկը (Тер-Мартиросов, էջ 43-4): Քաղաքային համայնքի (Յակոբ Մանանդեան, *Արմաւիրի Յունարէն Արձանագրութիւնները Նոր Լուսաբանութեամբ*, Երեւան, Պետական Համալսարանի Հրատ., 1946, էջ 18, նկ. 4, էջ 23, նկ. 5), համապատասխանաբար՝ նաեւ քաղաքային համայնական սեփականութեան առկայութեան պա-

բագայում՝ տարբեր պատկանելիութեան հողատարածքների նման «սերտաճումը» հազիւ թէ ընդունելի լինէր:

[24] Համալիրի պեղուած հատուածի մառանում գտնուել է 36 մեծ կարաս, որոնցից իւրաքանչիւրի տարողութիւնը առնուազն 250-300 լիտր է: Անգամ կարասների ծաւալի համեստ հաշուարկի պարագայում՝ այս մէկ մառանում պէտք է ամբարուած լինէր շուրջ 9-10 տոննա գինի: Ենթադրութիւնն առ այն որ կարասների մի մասը կարող էր օգտագործուել նաեւ այլ մթերքի ամբարման համար (հացահատիկ, ալիւր եւն.) իրատեսական չէ՝ ելնելով տարբեր մթերատեսակների պահպանութեան պահանջներից (M. Zardaryan and R. Hovsepyan, "The Agriculture of Western Syunik, Armenia in the Light of Archaeological and Archaeological Data (Preliminary Study on the Economy of Early Yervandid Settelments)", *Bridging Times and Spaces. Papers in Ancient Near Eastern, Mediterranean and Armenian Studies. Honouring G. Areshyan* (P. Avetisyan, Y. Grekyan editors), Archaeopress Archaeology, Oxford, 2017, էջ 407-20:

[25] Նման հարեւանութիւնը, թերեւս, կ'ունենար նաեւ զուտ կիրառական նկատառումներ, զուգակցելով արքայի կենցաղի եւ ժամանցի ոլորտները:

[26] Խորենացի, Գլուխ ԽԱ, ԽԲ:

[27] Тер-Мартиросов, *Ервандашат*, էջ 12-13:

[28] Յատուկ շնորհակալութիւն ենք յայտնում Երուանդաշատի արշաւախմբի հնագէտ եւ ճարտարապետ իմ գործընկերներին՝ Ա. Պարսամեանին, Ա. Գաբրիէլեանին, Լ. Միքայէլեանին, Ա. Խեչոյեանին, Հ. Կիւրեղեանին, պեղումների իրագործման եւ հնավայրի հանրահռչակման խնդրում ունեցած մեծ ներդրման համար:

SOME THOUGHTS ON THE TOPOGRAPHY, CHRONOLOGY AND CULTURAL ASPECT OF YERVANTASHAD

(Summary)

SUSANNA MOURADYAN
syuzmuradyan@gmail.com

The study of the palatial construct at the archeological site of Yervantashad, located in the trans-Araxes region, has uncovered new qualitative facts regarding the cultural links between Urartu and Armenia in the second century BC. The latest explorations at the site have uncovered evidence that during the Orontid dynasty steps were taken to restore and reuse the Urartian palace. One of the steps was the addition of a Susi-type, tower-shaped sacred place next to the palace.

The idea of renovating and reusing the palace is linked to the plans of Yervant the Last, who wanted to relocate his capital as well as certain Urartian religious/architectural features from Armavir to this location.

The article outlines these facts and argues that, based on an examination of the historico-topographic features of the excavations conducted next to the "Andar Dzenentots" kingly paradise, the latter was a part of Yervantagerd's palatial compound, and not a palace for hunting; the compound's backyard was probably on the other side of the river Araxes.